ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

29 դեկտեմբերի 2016 թվականի N 135-Ա

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով՝ <ՋԵՓՅՈՒՌ-ԵՐԵՔ > ՍՊ ընկերության 2016 թվականի հունիսի 23-ի թիվ 03/07-06 դիմումը, փոփոխված աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <ՋԵՓՅՈՒՌ-ԵՐԵՔ > ՍՊ ընկերության՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրում /հարավ- արևմտյան տեղամաս/ արդյունահանում կատարելու համար 2012 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ ՇԱԹՎ-29/360 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել՝ 29 տարով, սահմանելով այն մինչև 2045 թվականի մարտի 21-ը:

1) <ՋԵՓՅՈՒՌ-ԵՐԵՔ > ՍՊ ընկերությանը տրամադրված ՀՀ Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրում /հարավ- արևմտյան տեղամաս/ արդյունահանման նպատակով տրամադրված <ARM WGS-84> կոորդինատային համակարգի՝

1.X=4467045 Y=8469742, 2.X=4467122 Y=8469813, 3.X=4467210 Y=8469596, 4.X=4467118 Y= 8469387. 5.X=4466901 Y=8469507 կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝

1.X=4466922 Y=8469226, 2.X=4467118 Y=8469398, 3.X=4467210 Y=8469596, 4.X=4467120 Y= 8469816. 5.X=4467018 Y=8469748, 6.X=4467026 Y=8469842, 7.X=4466900 Y= 8469888, 8.X=4466704 Y= 8469884 <ARM WGS-84> կոորդինատային համակարգի կոորդինատներով սահմանափակված, մարվող՝ 798 950 մ^3, մնացորդային պաշարներով տեղամասը:

2) Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 27 550 մ^3 մարվող պաշար:

3) 2012 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ ԼՎ-360 լեռնահատկացման ակտով տրամադրված տարածքն ընդլայնել, տրամադրելով՝

1. X=4466922 Y=8469226 H=1622.8 (h=0) 2.X=4467118 Y=8469398 H=1630.0(h=0)
3. X=4467210 Y=8469596 H=1606.5(h=0) 4.X=4467120 Y=8469816 H=1607.8 (h=-2.8)

5. X=4467018 Y=8469748 H=1630.0(h=-5.0) 6. X=4467026 Y=8469842 H=1624.5(h=0)
7. X=4466900 Y=8469888 H=1660.0(h=0) 8. X=4466704 Y=8469884 H=1655.0(h=0) >>
<ARM WGS-84> կոորդինատային համակարգի կոորդինատներով սահմանափակված 19.17 հա տարածք,

2. Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության հետ 2012 թվականի դեկտեմբերի 05-ին վերաձևակերպված թիվ ՊՎ-360 պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ